ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հունիսի 2023 թվականի N 908 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1491-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 28-ի «Շրջակա միջավայրի դիտարկումների պետական ցանցի օբյեկտների հիմման պահպանության, դրանց շուրջ պահպանական գոտիների ստեղծման կարգը և սահմանափակումների ցանկը հաստատելու մասին» N 1491-Ն որոշման՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Սահմանել, որ շրջակա միջավայրի դիտարկումների պետական ցանցի օբյեկտների հողամասերը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված կարգով՝ հետևյալ չափերով՝

1) օդերևութաբանական կայանի, այդ թվում՝ դիտահրապարակի համար՝ 0.5-1.0 հեկտար.

2) մակերևութային ջրերի ջրաչափական դիտակետի համար՝ 0.10-0.15 հեկտար (առանց ջրային տարածքի).

3) ստորերկրյա ջրերի մոնիթորինգի ջրաչափական դիտակետի (հորատանցք, ջրհոր, աղբյուր, որոնք տեղադրված են համայնքային հողերում) համար՝ 4-8 քառ. մետր.

4) բնակավայրերում օդի աղտոտվածության մոնիթորինգի դիտակայանի համար՝ 30-50 քառ. մետր։».

2) հավելվածի 1-ին կետի «ա» ենթակետը «հիդրոլոգիական,» բառից հետո լրացնել «հիդրոերկրաբանական,» բառով, իսկ «ջրերի» բառից հետո՝ «(մակերևութային և ստորերկրյա)» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

08.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ